*Վերջին անգամ դեռ կ'ըլլայ գեղեցկութեան մեղեդին.*
*Վերջին անգամ կ'ըլլայ ակը, ժըպիտ, նըւագ և համբոյր...*
*Պարուրեցէք շուտով զիս, ով ըստուերներ մահաբոյր,*
*Թող անհետեմ ձեր խորունկ ծալքերուն մէջ, անծանօթ...*
*Աշուն, տար զիս, չոր տերև մ'ինկած ցոյսի ըրբան մօտ։*
*Զիս տար հեռուն, հոն՝ ուրտեղ կ'երթան ժըպիտն ու ոսկին,*
*Եւ հրաբաղբը ծաղիկ երիտասարդ հասակին...*

*Երբոր նորէն քու ծոցէդ բացուին վարդերը գարնան.*
*Թող իմ հոգին ալ բացուի ճառագայթի մը նըման.*
*Ու խառնըւի լոյսերուն՝ որոնք թեթև՝ կը փախչին*
*Իրենց գոգին մէջ նըւագն ազիւրներու մըրմունջին։*
*Ողջոյն տայ քեզ, Բընութիւն, մայը կաթոգին, յաւիտեան.*
*Ու կայծն ըլլայ ոսկեշող, երկնածաղիկ խընդութեան,*
*Ըլլայ ժըպիտը նորէն, մըտերմութիւնը կորած,*
*Ու խընկաբոյր իրիկուան քաղցրիկ մըրմունջն երկնասլաց...*

« Երազներ ու ճառագայթներ » ԱՐՍԷՆ-ԵՐՈՒԱԹ

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

## Ի ՆՊԱՍՏ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Անգիրեալ լուրերէն Հայերիէն
գրչեալ — — — Իլերիէն ի լոպի՝ հո-
գիվոյ Տ-ոյին վրայ։

Ամենուն յայտնի է արդէն, թէ Թիւրքիա կոչուած դժոխքին մէջ դիւական մեթոտով ծրագրուած ու Հայութեան վրայ գործադրուած անլուր խժդժութիւնները, — 1914 – 1917 ին, — ինչպիսի՛ յուզումն պատճառեցին քաղաքակրթեալ մարդկութեան։ Ի լուր մէկ միլիոնէ աւելի կոտորուած հայ խաղաղ և անմեղ ժողովրդեան՝ բոլոր աշխարհ մեծապէս ցնցուեցաւ։ Ժողովրդեան արդար զայրութի բողոքներ որոտացին ամէն կողմէն՝ ճիւաղ թալէաթներու և Էնվէրներու դէմ։ Մամուլն և քաղաքագէտ վարիչներ մէկ կողմէն, միւս կողմէն ալ համաշխարհի կարեկցութեան և կրից կոհակները ալեկոծ ովկիանոսի նման պահ մը թուեցան պատռել ամէն թումբ ու ողողել ծածկել Թիւրք բռնապետութիւնը, զոչելով ահագնասաստ. կործանեսցի՛ Թիւրքիա. մեռցի՛ն չարամա՛ն մարդագազաններ Թրքական կառավարութեան. կեցցէ՛ Մարտիրոս, բայց անկախ Հայաստան։

Այո՛, յանուն արդարութեան և իրաւունքի այսպիսի անվերջ յայտարարութեամբք և բողոքներով շարժեցին դաշնակիցք՝ Ասիոյ, Ամերիկայի և Եւրոպայի չէզոք կեցող մեծ ու փոքր ազգերը՝ ընկերշակել իրենց, քանի որ մանաւանդ Գերմանիոյ արհաւիրքը դեռ կը վրդովէր զիրենք և պատերազմի ելքն ալ անորոշ էր։ Ասոնց

© National Library of Armenia

— ինչպէս նաև մեր մարտիրոս ազգի կամաւոր Լէգէոններու հերոսական մարտակցութեամբ — երբ փառապանծ յաղթութիւնը զգեստեց զգողութի Ցեատոնն և իր չարախտավար ընկերները, և ժամը հասաւ ասոնց աւարը մէջէրնին բաժնելու, ահա այս պահեհաւ է որ յանկարծ և չհաւատալի կերպով զգացումները փոխուեցան նկատմամբ որդեկոտոր և անճեռ եղող Հայութեան։ Արդարութեան և իրաւունքի մարտագոչ սկզբունքներուն՝ շուտով փոխանակեցին ընչաքաղցութեան և կցման ամօթալի միջյարմարութիւններ, ոչ միայն իրարու, այլ և դահիճ Թիւրքին հետ, կարծես թէ լզելով իրենց թքածը, որ աւելի կը զարմացնէ և զայրացնէ արդարախոհ մտքերը։

Եւ այն ժամանակ իսկ՝ երբ Թիւրք հարէմի զուռնաճի Պիէռ Լոտիին արձագանգ տուին ոչ միայն ոսկիէն շլացած լրագիրներ, այլ և անգղիական և ամերիկեան դահլիճներու անդամք ոմանք իսկ՝ ի պաշտպանութիւն Թիւրքիոյ։ Ամ՛օթ եւրոպական դիւանագիտութեան. որ դրժելով իր խոստումներուն, կը վերադառնայ դարձեալ իր հին հեշտանքին։ Սակայն դիտելով հեռուէն այս վատշուէր շարժումը, սոյն նախազգացութիւնը ունեցայ, թէ այդ եզաբէլը՝ որ խարեց և խաղցուց դար մ՝ամբողջ, և իր ուզածին պէս Եւրոպիոյ նախանձընդդէմ տէրութիւնները, իր քայքայուած ու զազրելի գոյութիւնը պարզապէս քաջ տանելու համար, նոյնը կարող է նաև Հանրազգային Վեհաժողովոյն մէջ իսկ վաստրկիլ իրեն պաշտպաններ, և Հայաստանի անկախութիւնն ի դերև հանել։ Ուստի փութացի «ՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ ՊԱՐԻԶԻ ՀԱՆՐԱԶԳԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՅՆ ԱՏԵՆԻՆ ԱՌՋԵՒ» խորագրով յօդուած մը ղրկել Հայոց Ազգ. Պատուիրակութեան վ.սեմ. Նախագահին՝ ներփակ նամակով մը, յորում իրրև առանձին անհատ կը թելադրէի, որ ամէն դիւանագիտական միջոցներ ի գործ դնելով հանդերձ, երբ տեսնէ որ Հայաստանի անկախութեան խնդիրը ընդդիմութեան պիտի հանդիպի, — Հայերու սակաւութեան պատճառաւ, — անմիջապէս Հայի օրինաւոր ժառանգութեան դատը հանէ վեհաժողովին ատեանը, և իրաւասութիւն պահանջէ։ Եւ այս դատին յաջողութեան համար՝ ես ինքս պատմական, աշխարհագրական և ազգագրական զօրեղ փաստեր տրամադրած էի, ցոյց տալով, թէ Հայն եղած է — Ֆրիստոսէ ինն դար յառաջ՝ մինչև ցայսօր — Մայր Հայաստանի օրինաւոր ժառանգը. վասն զի հոն ծնած և սնած է միշտ յամենայն յեղափոխութիւնս ժամանակաց, և զարգացուցած է զանի. իսկ Թիւրքը ԺԲ—ԺԴ. դարուն ապա, և իր հրոսակ խուժած է հոն, բռնութեամբ յափշտակած է զանի, աւարած ու աւերած անխնայ և անընդհատ. իսկ վերջերս Հայութեան բուն դահիճը եղած, ինչպէս գիտէ աշխարհ ամենայն։

Կը ցաւիմ որ իմ հաղորդագրութիւնս, առ որ ուղղած էի, հասած չէ՝ թղթատարական անկանոնութեան կամ փոխադրութեանց սակաւութեան պատճառաւ. սակայն ինչ որ ես կը նախագուշակէի խիթալով յայնժամ, այսօր մարմին առած սկսաւ յերևան գալ. այսինքն՝ այն բանը, — այն է՝ Հայի զանգուածային կոտորածը, — զոր թրքական նենգաւոր դիւանագիտութիւնը կը ջանար իրրև չեղեալ յայտարարել, այսօր ընդհակառակն Թիւրք պատուիրակութեան գլուխը՝ Դամատ Ֆէրիթ փաշայի առ Վեհաժողովն մատուցած պաշտօնագրով իրր ստուգիւ կատարուած եղելութիւն մը կը յայտարարուի անամօթաբար. բայց ի հարկէ փաստելու համար, թէ Հայաստան կոչուած երկրին մէջ բուռ մը հայ հազիւ մնացեր է, ան անընդունակ է անկախութեան. հետևաբար Օսմ. կայսրութեան ամբողջութեան թողլի է այն, անդրագոյն չարիքները խափանելու համար զէթ։

Վեհաժողովի Նախագահին կլէմանսոյի տուած կտրուկ և ճարտար պատասխանով արդէն իսկ Թիւրք վարչապետի նենգութեան դիմակը վար առնուած է, և ինքն ալ կեղծ ներկայացուցչի մը պէս ամօթապարտ յետ դրկուած ի Կ. Պոլիս։ Բայց որովհետև մէկ կողմէն Եւրոպիոյ անգութ և ընչաքաղց Ֆինանսիէրներն, և միւս կողմէն

© National Library of Armenia

ալ շահագործող տէրութիւնները կարող են անկէց օգտուիլ, այսինքն Օսմ. քայքայուած տէրութենէն զանի կորզել ուզած ժամանակ՝ փորձուին բաժնել մայր Հայաստանը իր ամբողջութենէն։ Եւ յիրաւի՝ ինչ կը նշանակէ Ամորիներու կողմէն, — որոնց թիւը հազիւ թէ 100,000 մնացած, կամ ոչ, — պատուիրակութիւն մը հրաւիրել ի Պարիս և անոնց անունով պահանջել զկիլիկիա։ Ինչ կը նշանակէ Հնդկաստանի 100,000 մահմէտականներու բողոքը Դաշնակիցներու դէմ, և պահանջը որ Թիւրքիոյ ամբողջութիւնն և Սուլթանի խալիֆայութիւնը անխախտ պահուին. մինչդեռ Հիճազի Էմիրն արդէն իսկ խալիֆայ յայտարարուած և ճանչցուած էր տարի մը յառաջ, և թիւրք կարավարութեան հայոց դէմ ըրած գազանութիւնն ալ սաստիկ պախարակուած նոյն իսկ Հնդկաստանի մահմէտականներէն, իբր անջնջելի նախատինք մը մահմէտականութեան։ Մէ չիմանար թէ ասոնք, — ինչպէս կիլիկիոյ հայ լէգէոնի ցրումը, — շահադիտական հաշիներով եղած ծածուկ թելադրութիւններ են։ Արդ՝ ինչպէս Թրքական բուռ մայնութիւնը միայն ատակ է, առանց իր ամենամեղ եղեռնը կարենալ ծածկելու՝ հայերու անհետացումով միայն յանդգնել տէր մնալ անոր բնաշխարհին, առանց տեսնելու Հիմալայաէն աւելի իր գործած հսկայ հակասութիւնը. այսպէս ալ Ֆինանսիէրներու խրտուիլակ եղող եւրոպական անբարեխիղճ դիւանագիտութիւնը միայն ընդունակ է շահագործելու Հայոց արիւնով ողողուած բնաշխարհը, թողլով մահազերծ մնացորդը ամ մի եա տովի և սուրի ճանկերում։ Եթէ այսպիսեաց խիղճը բթացեր է, զէթ թեկուցայ կնկան օրինակն առ Դաւիթ՝ թող խօսի և բողոքէ իրենց պատուին հետ, տպա թէ ոչ՝ պիտի մնայ այն պատմութեան մէջ իբր նիւթ յաւիտենական անէծքի և ամօթի և Աստուծոյ արդար վրէժխնդրութեան։

Իսկ մենք պիտի չանանք ցուցնել, հաստատ տուեալներով, թէ՝ թիւրք կառավարութեան և թէ՝ Հանրազգ. վեհաժողովին, թէ Հայերն ինչպէս պատերազմէն յառաջ, այսպէս և վաղը այնքան աւելի բազմաթիւ են՝ Կիլիկիոյ և Մեծն Հայաստանի մէջ՝ քան զհոգեվարք թուրք ազգն ու ժողովուրդը, քան երբ սոքա առաջին անգամ հոսելով տղմաշաղախ հեղեղի պէս Մոնգոլիոյ դարաստաններէն՝ բռնագրաւեցին մեր հայրենի երկիրն, և անոր տէր դարձան աւազակօրէն։ Ա՛ռ այս նախ դիտել կու տամ, որ ասոնք ոչ միայն իրենց հաստատագրական վատառողջապահութեան շնորհիւ, այլ և անբարոյական զեղծումներով արդէն իսկ նուազագոյն աճումն ունեցած են հասարակօրէն քան զՀայս։ Իսկ վերջին տասնամեկին մէջ նախ բուրքոբուլգար պատերազմին և անոր հետևանք խուճապողական արտագաղթին առիթով, և հուսկ վերջին հնգամեայ աշխարհաւեր պատերազմին ընթացքում Հայոցմէ եռապատիկ ու քառապատիկ աւելի կորուստներ ունեցան՝ սրով, սովամահութեամբ և վարակիչ հիւանդութիւններով, այնու մանաւանդ՝ երբ իրենք իրենց ձեռքով սպառեցին ոչընչացուցին իրենց ամենալիր ամբարն ու մառանը, այսինքն հայոց մշակեալ դաշտերն և աշխատաւոր հայ ազգաբնակութիւնը։

Սակայն ես մի ուրիշ տեսակիտով կ՚ուզէի հոս հրաւիրել հանրութեան ուշադրութիւնը Հայոց թուական առաւելութեան՝ Թիւրք կամ Տաճիկ ազգաբնակութեան վրայ, որը, եթէ չեմ սխալիր, ոչ տոհմային և ոչ ալ եւրոպական մամուլն ի նկատի առին, թող թէ ըստ արժանւոյն վիճակագրել։ Կ՚ուզեմ ըսել բաւականաչափ այն հայ տարրը, որ իր նիւթական գոյութիւնը պահելու համար միայն, կամ ճնշող բռնութեան տեղի տալով՝ քան թէ յօժար կամօք՝ ի վաղ ժամանակաց հետէ մինչև այսօր ծածկուած կը մնայ Թիւրքին, Փուրդին և Լազին մէջ, մահմէտականութեան կեղծ դիմակի ներքև։ Քիչ չեն նաև Յոյնին, Վրացւոյն, Լէհին և Լատինին յարողները։ Գուցէ թէ այդ ազգերէն ո՛չ մէկը գիտէ այս բանս, կամ կը կեղծէ չգիտնալ. սակայն օտարացած Հայն՝ ընդհակառակն՝ ոչ միայն ունի իր հայ ծագումի գիտակցու-

© National Library of Armenia

թիւնը, այլ և պապենական աւանդութիւնները կը պահէ տակաւին, ինչպէս պիտի խօսին փաստերը։

Այո՛, Հայերուն՝ մէկ կողմէն տաճկական բռնապետութեան և հարկապահանջութեան ճնշումով, և միւս կողմէն ալ անընդհատ գերեվարութիւններով և առանցքամբ բռնի դարձն ի մահմետականութիւն՝ յիՒ. դարուն՝ արդէն պատմական իրողութիւն մ'է, բայց մասնական. իսկ ԺԷ-ԺԸ. դարուն զանգուածային մեծագոյն չափեր առած է այն, այնպէս որ թէ՛ Մեծ Հայքի և Փոքր Հայոց և Ասիոյ հարիւրաւոր գաւառներ և հազարաւոր գիւղեր, որոնք ըստ Մօրէրի, և յամին 1772 ի Մաղրաս տպուած Տնտրին երբեմն 4,644,000 երդ կը կազմէին, 27 միլիոնէն աւելի բնակչաց։ Սակայն մենք աւելի դրական ըլլալու համար վստահութեամբ կրնանք ըսել, թէ Տաւէռնիէի և Տուռնֆորի՝ ուղեորութեան ժամանակ, այն է ԺԷ. դարու առաջին կիսուն, առաւելապէս Հայերէ բնակուած էին, — չնայելով որ ասոնք թրքախօս ու քրդախօս հայերը չփոթած ըլլան անոնց հետ։ 1806ին ընդհակառակն անոնց երկու երրորդը հաւիւ մնացեր էր։

Ուստի մենք առաջնորդ առնելով մեզ Հ. Ղ. Ինճիճեանը, որուն ազգային պատմութեան, Ազգագրութեան և Աշխարհագրութեան մասին ունեցած հմտութիւնը անվիճելի էր այն ժամանակ, տեսնենք թէ որ գաւառներու մէջ, և ինչ չափով տեսի ունեցած են գլխաւորապէս զարձերը։

Սա 1806ին ի Վենետիկ տպուած ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ (Աշխարհագրութեան Բ. Հտ. եր. 395). կը գրէ ՀԷՄՇԻՆԻ գաւառի Համշէն քաղաքաւանի մասին հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւնը. «Ամնունս Համշէն յոմանց ստուգաբանի Համամաշէն, որպէս թէ շինեալ ի Համամ իշխանէ։ Զգի առ ստորոտով Բարիաբ լերին, սահմանակից Լազի . . . Ցէյրութիւն երկրին է ի ձեռս երկուց ազգայից, յորոց մին դարձեալ է ի Հայոց։ Բնակիչք երկրին (իսկ գաւառին) յաւուրս գոյն հայ էին, այլ յետ ԺԵ. դարուն և ի սկիզբն ԺԸ.-ի՝ առ հաւատակ՝ հանկարծ ամենայն շրջակայ գիւղօրէիք՝ դարձան ի տաճկութիւն՝ սակս բռնութեան հարկապահանջութեան. բայց գոնեին տակաւին ի նոսա քրիստոնեայք, յորոց գիւղօրէա.կանգուն կան տակաւին եկեղեցիք իւրեանց՝ ի վաղուց մնացեալ, այլ չունին երէց ի հովուել. միայն բանի մի անգամ յամին գայ առ նոսա երէց յԵվդոքիւս գեղջէ։ Իսկ տաճիկք (այսինքն՝ մահմէտականացեալքն) խօսին մինչև. ցայժմ հայերէն. ի գործ ածեն ի գիւղօրէս ինչ անուանս կնքահայր, կնքամայր. պսակեն պսակն և զայլ ծէս քրիստոնեական հաւատոց. յանսիեն յեկեղեցիս, և այլն։ Ոմանք կեսկէս են հաւատովք, արտաքուստ միայն ցուցանելով զտաճկութիւն»։

Իսկ Հ. Պողոս վ. Մէհէբեան, որ Ինճիճեանէն 30 տարի առաջ, այն է 1776ին՝ ճանապարհորդած է Համշէն, իր ինքնակենսագրութեան մէջ շատ կենդանի գոյնով կը նկարագրէ գաւառիս խեակ գիւղին մէջ և շրջաբնակ գիւղերու տաճկացած իր արիւնակիցներէն գտած անսովոր ընդունելութիւնը և մէկ սրտամմիկ տեսարանը։ Հոս ուրացեալ ժողովորդը լսելով որ եկաւորն քահանայ է, չորս կողմը խմնուած աջը կը համբուրէին. և իր ուղեկից քահանային շարժական սեղանին վրայ պատարագած ժամուն՝ ամէնքն ալ ծնրադիր մտիկ կ'ընէին. ուստի զուշակեց, թէ անոնք հայութենէ դարձած են, բայց ոչ մոռցած զայն. փնտռեց և գտաւ եկեղեցին ևս, որ ոչխարհ այրի մը պէս իր ուրացեալ որդւոցմէ թողուած օրէն ի վեր՝ թէև փակ, բայց կը մնար անարատ։ Բանալ կու տայ զանի, կը լուայ կը սրբէ. և Ս. Խաչին տօնը իր ուղեկից չորս նորընծայ քահանաներով

1. Որոնցմէ յիշատակած է հետեւեալ 22 գիւղերը. «Պաշմանդիճ, Տաֆ, Զաբ, Կոյուճա, Փոյտիճ, Ամօգիա, Մեծմուռ, Ժանբուռնոց, Մուղեվիճ, Ուսկուրտա, Շնչիվա, Գուշիվա, Որդնեց, Մակրեվիճ, Խապագ, Խալա, Վերին Վիմա, Ներքին Վիմա, Եվոդիւս կամ Եղեվիս, Բայոտվիս, և Խեակ»։

© National Library of Armenia

ցայգապաշտօն ընէլէն ետքը՝ ձայնաւոր պատարագ մ'ես կը մատուցանէ։ Ի ձայն խորհուրդ խորին խորհրդաւոր երգին կ'արթընայ ուրացեալներուն խիղճը, կը յիշեն իրենց պապերու և մամերու հաւատքը, և խուսնրնթաց կ'ուզեն նեռս մտնել։ Սա կ'ուզէ արգիլել անոնց մուտքը. բայց ի զուր։ Աւետարանի ժամանակ, կը մեկնէ զանի, հազարացուց լեզուով, շրջակայ գիւղերէն հոն եկող ժողովրդեան, յիշեցնելով իրենց նախնեաց սուրբ կրօնքն և կրօնական պարտքերը։ Եւ ապա սաստիկ զգաւուած կը փութայ մեկնիլ անտի, զի հալածանաց ժամանակ ըլլալով կընային ձերբակալել զինքը՝ իբր փոանգ։

Ինճիճեան ափսոս որ Համշէն գաւառի տաճկացած 20–22 գեղերէն միայն թեակի բնակչութիւնը նշանակած է, 200 տուն. սակայն ասկէ աւելի բազմաթնակ գիւղեր ալ կային, ինչպէս, օրինակի համար, Պաշամշէն և յիշեալներէն շատերը։ Արդ՝ հաշուելով մերձաւորապէս իւրաքանչիւր գեղ 200 տունք, և տուն գլուխ միջին հաշուով 10 հոգի, — գիտելով որ ըստ հայկ. նահապետական սովորութեան այսօր իսկ հայ գիւղօրէից մէջ դեռ կան տուներ, որոնց գերդաստանը կը հասնի նաև 20ի, 30ի և 40 անձանց, — կ'ունենանք 44,000 հոգի տաճկացած հայեր սոյն գաւառին մէջ։

ԵՐԶՆԿԱՑ գաւառին համար կը գրէ (Հտ. Ա. եր. 98) «Ըստ ոմանց ասելոյ յառաջագոյն ունէր 250 գիւղօրէա. և թէ բնակիչք գաւառիս յազգիս Հայոց ի սկզբանէ անտի, էին արք կորովիք և քաջասիրտք ... բայց այժմ ի պատճառս կեղեքելոյ իշխանաց՝ ամայացեալք են, և կամ...»։

Խօսելով (Հտ. Բ. էր. 284–289) ՍԵԻՍՏՈՅ կամ ՍԻՎԱՍ նահանգի գիւղերէն մեծագունէն Զառայի մասին՝ կը գրէ «Ցորում էին իբրև 300 տուն հայք. աստի էր տիրացու Ցովսէփն, որոյ դարձեալ ի տաճկութիւն, եղև փաշայ Սեւստոյ։ Ցորոյ օրինակէն յորդորեալ և այլոց ոմանց դարձան ի տաճկութիւն, ակն ունելով հասանել պատուոյ առ ի նմանէ։ Այլ անտի և այսր բազումք յոչինչ ասիրս նաև ի բարկանալն իսկ՝ դառնան ի տաճկութիւն. ուստի բազում գոսահի անդէն խառն բնակութիւն տաճկաց՝ ընդ քրիստոնէից Հայոց. այսինքն՝ այրն քրիստոնեայ, կինն տաճիկ, կամ ընդհակառակն։ ... Այժմեան փաշայք Սեւստոյ են ի տոհմէն՝ որք գոլով ի Զառա գեղջէն Սեւստոյ, կոչին Զառացիք։ Հաւ սոցա էր տիրացու Ցովսէփ յեկեղեցին Զառայի, յաւուրս Սուլդան Մուստաֆային Բ. ի. որոյ դարձեալ ի տաճկութիւն՝ ընկալաւ զփաշայութիւն Սեւստոյ, և կոչեցաւ Յուսուֆ փաշայ. զկնի Նորա նստաւ որդի Նորա Օսման փաշայն. ապա որդի Օսմանին՝ Մահմէտ փաշայն՝ յաւուրս Եղիազար առաջնորդին Սեւստոյ. ապա Ցիկրոյ փաշայն՝ եղբայր Մէհէմէտին, և այլք ըստ կարգի»։ Ցակոբ եպիսկոպոս Երևանու, — որ 1601ին կը գտնուէր. ի Հռոմ, — կը յայտարարէր առ Ճէրարտոս Վոսսի, թէ գիւղօրէք հաւատարէն գաւառին են իբր 300. և քաղաքին բնակչաց թիւն իբր 15 հազար տուն կը հաշուէր։ Իսկ Ինճիճեան կը յարէ, թէ «Այժմ ասին լինել 10 հազար. յորոց իբրև 2,000 տունք են յազգէս Հայոց. իսկ մնացեալքն տաճկաց. իսկ ցոյնք 9–10 տուն միայն։

(Շարունակելի) Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

## ՔԱՋԱՍԻՐՏ ԹԷ ՎԱՏԱՍԻՐՏ

Ուրախ եմ, որ Պ. Մեղու Շիրակայ «Կոչնակ»ի մէջ հրատարակած՝ զրամագիտական յօդուածներու ուշադրութեան առած է, և «Բազմավէպ»ի ներկայ տարւոյ Յուլիսի պրակով (եր. 223–224) իր դիտողութիւնը կ'ընէ Մեծն Տիգրանի որդւոյն և յաջորդին՝ Արտաւազդի մասին արտայայտած «վատասիրտ» մակդիրիս առթիւ։

Մէկդի թողլով Պ. Մեղուի ինծի տուած պատմական և լեզուական դաստերը, — որոնց համար անհուն կերպով շնորհակալ եմ, — կ'ուզէի իմանալ, թէ ուր տեսեր է որ «Բաս-

© National Library of Armenia